ՀԱՎԵԼՎԱԾ 1

«**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. **Պարտատոմսերի թողարկման պայմանները**

1.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով.

1.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային.

1.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի.

1.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար.

1.5 Տեղաբաշխման եղանակը՝ հրապարակային.

1.6 Պարտատոմսերի քանակը՝ 50,000 (հիսուն հազար) հատ.

1.7 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:

1.8 Պարտատոմսերի թողարկման օրը՝ ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը:

1.9 Պարտատոմսերի առաջարկի սկիզբ՝ ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը:

1.10 Պարտատոմսերի առաջարկի ավարտ՝ Պարտատոմսերի առաջարկի առաջին օրվան հաջորդող երեսուներորդ օրը ներառյալ: Եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչև այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:

1.11 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը.

1.12 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում.

1.13 Առաջարկի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է 1.19 կետում նշված բանաձևով:

1.14 Տեղաբաշխման առաջին օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

1.15 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 72-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.16 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 6.50%. Արժեկտրոնի արժույթը՝ ԱՄՆ դոլար, վճարումն իրականացվում է համարժեք ՀՀ դրամով, հաշվարկված վճարման իրականացման օրվա համար գործող ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը՝ փաստացի/փաստացի (ACT/ACT):

1.17 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ, 54-րդ, 60-րդ, 66-րդ և 72-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.18 Արժեկտրոնի գումար՝ յուրաքանչյուր կիսամյակի համար՝ 3.25 (երեք ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) ԱՄՆ դոլար մեկ հատ պարտատոմսի դիմաց:

1.19 Պարտատոմսերի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը